ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՆԻԿՈԼՈՋ ԲԵՐԶԵՆԻՇՎԻԼՈՒ ՀՈՒՇԵՐԸ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

(1945 թ. հոկտեմբեր, Սոչի)*

Բանալի բառեր՝ Ն. Բերձենիշվիլի, Է. Խոշտարիա-Բրոսե, Ս. Ջանաշիա, ԽՍՀՄ, Ի. Վ. Ստալին, հայեր, Ուրարտու:

1998 թ. Թբիլիսիում հրատարակվող "Ծիսկարի" ամսագրի առաջին համարում (էջ 96–110) վրացերեն լեզվով[1] լույս է տեսել Խորհրդային Վրաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պատմաբան Նիկոլոզ Բերձենիշվիլու հուշերը՝ Վրաստանի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի Ն. Բերձենիշվիլու անվան սենյակի վարիչ Դոդո Լոմիձեի աշխատասիրությամբ և նույն ինստիտուտի նախկին փոխտնօրեն Էդիշեր Խոշտարիա-Բրոսեի ներածական խոսքով: Այդ հուշերը վերաբերում են 1945 թ. հոկտեմբերին Սոչիում ԽՍՀՄ առաջնորդ Ի. Վ. Ստալինի հետ վրաց պատմաբանների եռօրյա հանդիպումներին, որտեղ առաջնորդն իր դիտողություններն ու պատմագիտական դիտարկումներն է ներկայացրել նրանց՝ իր դժգոհությունը հայտնելով 1943 թ. լույս տեսած "Վրաստանի պատմություն" դասագրքի առնչությամբ:

Հուշագրությունում տեղ են գտել նաև Առաջավոր Ասիայի ու Անդրկովկասի երկրների, ժողովուրդների և պետությունների հին շրջանի պատմությանն առնչվող Ի. Վ. Ստալինի պատմագիտական հայացքները, որոնք մասնավորապես վերաբերում են ժողովուրդների ծագմանը, ազգակցությանն ու հարևանությանը: Զրույցների ընթացքում Ստալինն անդրադարձել է նաև հայոց հին շրջանի պատմության և հայերի ծագման խնդիրներին, ընդհանուր, հարևանցի կարծիք հայտնել հայերի մասին: Հայտնի է, որ ԽՍՀՄ առաջնորդը դպրոցահասակ տարիքից հատուկ հետաքրքրություն է դրսևորել հասարակագիտական առարկաների՝ մասնավորապես պատմության նկատմամբ: Նա խիստ ընթերցասեր է եղել, ունեցել է մեծ գրադարան: Պետք է նշել, որ Ստալինի կողմից ներկայացված պատմագիտական որոշ դրույթներ և տեսություններ բավականին ըն-

---

* *Ներկայացվել է 03. XII. 2019 թ., գրախոսվել է 23. I. 2020 թ., ընդունվել է տպագրության 27. I. 2020 թ.:*

[1] *Խորին շնորհակալություն ենք հայտնում Վրաստանի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի գիտաշխատող Բաչո Կեկելիային՝ սույն հրապարակման վրացերեն բնագիրը մեզ տրամադրելու, նաև՝ Թբիլիսիում գործող հայկական "Ալիք մեդիա" զանգվածային լրատվամիջոցի աշխատակից Նորիկ Գասպարյանին՝ այն վրացերենից հայերեն թարգմանելու հարցում աջակցելու համար:*

դունված ու տարածված են եղել XIX դարավերջի և XX դարասկզբի եվրոպական ու նախախորհրդային գիտական շրջանակներում, որոնք ստալինյան ցուցումներով ստացել են խորհրդային պաշտոնական պատմագիտության քաղաքացիություն: Այսօր դրանցից շատերը հնացած են, ոչ արդիական:

ԽՍՀՄ առաջնորդն այս կամ այն առիթով նաև մտքեր է փոխանակել խորհրդային Վրաստանի ներկայի ու ապագայի մասին, հետաքրքրվել երկրում տեղի ունեցող դրական փոփոխություններով և առաջընթացով, ապագայում իրականացվելիք աշխատանքներով:

Մեր խմբագրությամբ և ծանոթագրություններով ստորև համառոտ ներկայացնում ենք Է. Խոշտարիա-Բրոսեի ներածական խոսքում տեղ գտած դիտարկումները, ինչպես նաև ակադեմիկոս Ն. Բերձենիշվիլու հուշագրության առավել հետաքրքրական հատվածները՝ հատկապես այն դրվագները, որտեղ Ի. Վ. Ստալինն անդրադարձել է Հայոց պատմությանն ու հայերին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՒԴԱՆՅԱՆ

Է. ԽՈՇՏԱՐԻԱ-ԲՐՈՍԵԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

1945 թ. հոկտեմբերին Սոչիում հանգստանալու ժամանակ՝ պատմության շուրջ զրուցելու նպատակով, ԽՍՀՄ առաջնորդ Ի. Վ. Ստալինն իր մոտ է հրավիրում ակադեմիկոսներ Սիմոն Ջանաշիային և Նիկոլոզ Բերձենիշվիլուն: Նա ծանոթացել էր վերջիններիս հեղինակությամբ 1943 թ. լույս տեսած "Վրաստանի պատմություն" դասագրքին և ցանկանում էր իր կարծիքը հայտնել հեղինակներին: Անկասկած, պատերազմը նոր ավարտած Խորհրդային Միության ղեկավարի, Գերագույն հրամանատարի կողմից Վրաստանի պատմությամբ հետաքրքրվելը պատահական չէր: Վրաստանի աշխարհաքաղաքական դիրքը կարևորագույն դերակատարություն ուներ ԽՍՀՄ արևելյան քաղաքականությունում: Մյուս կողմից՝ պատերազմում Գերմանիայի դաշնակից Թուրքիայի խնդիրը և նրա հետ կապված հարաբերությունները ենթակա էին կարգավորման (ավելի ուշ այս հարցն առաջ է քաշվել ԽՍՀՄ կողմից): Սակայն տվյալ դեպքում՝ Ստալինի հետ հանդիպման ժամանակ, քննարկումը վերաբերել է միայն Վրաստանի պատմությանը: Այստեղ, բնական է, խոսվել է Ստալինի՝ վարժարանում սովորելու տարիների հիշողությունների, առանձին հեղափոխական գործիչների և գիտնականների բնութագրման, քաղաքականության, Վրաստանի տնտեսության ու հեռանկարների շուրջ:

Ն. Բերձենիշվիլին հարկ է համարել Ստալինի հետ հանդիպման փաստերն ու տպավորությունները գրի առնել օրագրում, այնուհետև՝ առանձին գրառումների տեսքով, ինչը նշանակում էր, որ դրանք տարածում կգտնեն հանրության լայն շրջանակներում: Այս ամենով հանդերձ՝ նա նպատակ է ունեցել նաև բնութագրել Ստա-

լինին՝ ցուցադրելով նրա կյանքի կենցաղային կողմերը: Գրառումներից երևում է, որ Վրաստանի պատմության վերաբերյալ Ստալինի հետ տեղի ունեցած քննարկումները խորը փորձագիտական մակարդակով են տարվել: Կասկած չկա, որ նա արտակարգ պատրաստված է եղել: Թե՛ նրա դիտարկումները, թե՛ ցանկությունները, իրոք, ուշադրության արժանի են թվացել: Եվ այս ամենն իր հետքն է թողել ինչպես "Վրաստանի պատմության", այնպես էլ Նիկո Բերձենիշվիլու հետագա աշխատությունների վրա (Գիորգի Սաակաձեն, դասակարգային և ներդասակարգային պայքարի գործոնը պատմական զարգացման գործընթացում և այլն): Հասկանալի է, որ Ստալինն ուղղակիորեն ծանոթացել էր "Վրաստանի պատմություն" դասագրքի վրացական տարբերակին, իսկ ռուսերենը ներկայացրել էր Սիմոն Ջանաշիան: Դրանից հետո Ստալինը ցանկություն էր ունեցել ծանոթանալու նաև հեղինակների հետ: Կարճ ժամանակ անց Սիմոն Ջանաշիան և Նիկո Բերձենիշվիլին ստիպված են եղել խորհրդային և հանրապետական թերթերում Վրաստանի հարավի պատմական հողերի վերաբերյալ նամակ հրապարակել[2]:

---

[2] 1946 թ. լույս տեսած "Հայաստան և հայ դատը (վավերագրեր)" աշխատությունում պատմաբան Գաբրիել Լազյանը նշում է, որ 1945 թ. դեկտեմբերին (այսինքն՝ Ստալինի հետ հանդիպումից մոտ մեկուկես ամիս անց) Ս. Ջանաշիան և Ն. Բերձենիշվիլին նամակ են հրապարակել նախ Թիֆլիսի "Կոմունիստ", ապա՝ "Պրավդա", "Իզվեստիա", "Կարմիր Աստղ", "Տրուդ" թերթերում, որտեղ պահանջ էին ներկայացնում Վրաստանի պատմական հողերի վերադարձը իրենց ժողովրդին՝ ներառյալ Տրապիզոնի շրջանը: Հեղինակը գրում է նաև, որ 1946 թ. փետրվարի 25-ին "Աստշիեյթիդ Պրես"-ի Մոսկվայի թղթակիցը տեղեկացրել է, որ Վրաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի քարտուղար Կանդիդ Չարկվիանին "Պրավդա" թերթում պաշտոնապես հաստատել էր 1945 թ. դեկտեմբերի 20-ին վրացի երկու պատմաբանների պահանջը Թուրքիայի նկատմամբ՝ Սև ծովի շուրջ 180 մղոն ձգվող մի տարածքի վերաբերյալ: Իր խոսքում Կ. Չարկվիանին նշում է, թե Վրաստանը 25 տարվա ընթացքում ձգտել է այդ պահանջի կատարմանը. "Վրացի ժողովուրդին երազը իրականացած չէ, որ է Վրաստանի հողային ամբողջութեան վերահաստատումը: Վրացական հողի սահմաններէն դուրս մնացած է անմահական վրացական երկիր մը՝ Արդուին, Արտահան, Օլթի, Թորթում, Իսպիր, Բաբերդ, Կիւմիւշխանէ, Կիրասոն եւ Տրապիզոն" [տե՛ս Գ. Լ ա զ ե ա ն. Հայաստան և հայ դատը (վաւերագրէր), Գահիրէ, 1946, էջ 372]: Նշենք, որ այս բոլոր տեղանունները նշված էին երկու պատմաբանների նամակի մեջ: 1957 թ. վերահրատարակված այս աշխատությունում հեղինակը որոշ փոփոխություններ է կատարել՝ մասնավորապես հավելելով, որ վրացի գիտնականները իրենց հողային պահանջները Թուրքիայի նկատմամբ հիմնավորելու համար "շուրջ չորս հազարամեակ դեպի ետ կ'երթան մինչեւ Հիթիթներու եւ Սուպարիներու շրջանը – երկրորդ հազարամեակի մէջ նախաքրիստոնէական շրջանի – եւ մեծ հանգրուաններով իրենց պատմութեան դարաշրջանները քննութեան առնելով՝ կը հասնին մինչեւ մեր օրերը: Արդարութեան տուրք տալով՝ պիտի ըսենք, որ վրացի գիտունները Կարսը վրացական հող այդ նամակին մէջ երբէ՛ք չեն հռչակեր եւ անոր միակցումը Վրաստանի այդ նամակով երբեք չեն պահանջեր: Ո՛չ թէ Կարսը վրացական հռչակելով՝ անկէ մեծահոգօրեն կը հրաժարին, այլ զայն իսպառ, երբէ՛ք եւ բնաւ

Հարկ է նշել, որ գրառումներում առանձնահատուկ հետաքրքրական են Ստալինի անձի բերձենիշվիլիական նկարագրությունը: Օրինակ՝ նա "վրաց կոմունիստ" և "վրաց հայրենասեր է", որ "Ստալինը մեր ժամանակվա բարձրագույն և ամենափայլուն պետական համակարգի՝ Խորհրդային Միության հեղինակն է, որտեղ Վրաստանի, ինչպես նաև բոլոր դաշնակիցների ապագան ապահովված է" և այլն:

Ստալինի կողմից վրաց ակադեմիկոսների հյուրընկալման վերաբերյալ բերձենիշվիլիական արխիվներում վերջինիս գրառումների առկայությունը վրաց հասարակությանը երկար ժամանակ է, ինչ հայտնի էր, և նրանց հանդեպ հետաքրքրությունը մեծ էր, սակայն մինչ Ն. Բերձենիշվիլու անձնական արխիվը պահվում էր Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (մշակվում էր), այս նյութերով հետաքրքրվողների համար դրանք անհասանելի էին:

Ստալինի մասին հասարակության մեջ տարբեր կարծիքներ գոյություն ունեն: Թե՛ Վրաստանում, թե՛ Ռուսաստանում, թե՛ ամբողջ աշխարհի պատմության մեջ Ստալինի դերակատարության վերջնական գնահատականը, թերևս, ապագայի գործ է, իսկ մենք հարկ ենք համարել հասարակությանը տրամադրել Ն. Բերձենիշվիլու բնութագրումը, որպեսզի հետաքրքրվող բոլոր անձանց հնարավորություն տրվի անձամբ դատել, թե որքան է այն համապատասխանում իրականությանը:

ՀԱՏՎԱԾՆԵՐ Ն. ԲԵՐՁԵՆԻՇՎԻԼՈՒ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

"1945 թվականի հոկտեմբերն էր: Մեծ պատերազմը ավարտած և հաղթանակած ընկեր Ստալինը հանգստանում էր ծովի ափին: Ընկեր Ստալինը կարդացել էր մեր "Վրաստանի պատմություն" դասագիրքը և հեղինակների հետ հանդիպման անհրաժեշտություն էր տեսել:

Հոկտեմբերի 14-ին ընկեր Կ. Չարկվիանին այժմ հանգուցյալ ակադեմիկոս Ս. Ջանաշիային և ինձ իր մոտ հրավիրեց: Ասաց՝ ընկեր Ստալինն ասել է. "Եթե հեղինակները դեմ չեն, Վրաստանի պատմության վերաբերյալ մի քանի նկատառում ունեմ":

Հոկտեմբերի 19-ին շարժվեցինք և 20-ին արդեն ընկեր Ստալինի հյուրն էինք: Մեր հյուրընկալությունը տևեց 3 օր: Հոկտեմբերի 23-ին հետ վերադարձանք և կասեմ նաև ուրիշների անունից՝ տխրեցինք, որ բաժանվում ենք նման մարդուց:

վրացական չեն նկատեր" [տե՛ս Գ. Լ ա զ ե ա ն. Հայաստան և հայ դատը (Հայ և ռուս յարաբերություններու լոյսին), Գահիրէ, 1957, էջ 363–364]: Այդուհանդերձ, 1947 թ. հոկտեմբերի 24-ին Միացյալ Ազգերի կազմակերպության քաղաքական կոմիտեի նիստում խորհրդային պատվիրակ Անդրեյ Վիշինսկին հայտարարում է, թե Կարսը վրացական հող է, և արդար է, որ վերադարձվի Վրաստանին՝ մատնանշելով վրաց ակադեմիկոսների հրատարակած հոդվածը, որտեղ, ինչպես ասվեց, որևէ խոսք չկար Կարսի՝ Վրաստանին պատկանելու վերաբերյալ:

Ընկեր Ստալինի "նվերները" բարձած գնում էինք՝ Վրաստանի պատմության, վրաց մշակույթի, գրականության, գրական լեզվի, վրաց ազգի զարգացման հեռանկարների վերաբերյալ առաջնորդող գաղափարներով: Որքան բան սովորեցի այս 3 օրվա ընթացքում, որքան գիտական ունակություն մեզ տվեց այս հանճարի հետ զրույցը: Որքան հեշտ և պարզ էին երևում բոլոր հարցերն այս տիտանի համար: Որքան վարպետորեն է բացատրում և կապում հարցի դժվարությունը, որքան վարպետորեն է նա ընկալում այն, ինչ կենցաղային և առաջնորդող է թվում: Ընկեր Ստալինը Վրաստանի պատմության վերաբերյալ բազում հարցեր առաջ քաշեց և յուրաքանչյուրի վերաբերյալ սկզբունքային կարծիք հայտնեց: Իր յուրաքանչյուր դրույթ ընկեր Ստալինը հանճարեղ կերպով փաստարկված էր ներկայացնում (ըստ Ստալինի՝ բոլոր կարծիքները փաստաթղթավորված պետք է լինեն, և "կարծում եմ" փաստարկն անպետք խոսակցություն է), և մեր նպատակն այս փաստարկները համապատասխան խորությամբ ու ճշտությամբ հասկանալն էր:

Մասնավորապես, մեր զրույցի առարկան ընկեր Ստալինի հետ եղել է հետևյալը. վրացիների ծագումն ու հին արևելյան մշակույթի ժողովրդի հետ հարևանության հարցը, Վրաստանի ֆեոդալական միապետության հարցը: Մասնավորապես, խոսք է գնացել, հիշում եմ, Դավիթ Շինարարի մասին: Վրաստանը ֆեոդալական շրջանի ավելի ուշ ժամանակներում, այսինքն՝ վրացիների պայքարը բարձր մշակույթի կրող ժողովրդի (օսմանաղզլբաշական) միջավայրի հետ: Հերակլի պայքարը Վրաստանի փրկության համար և թավադների դերը պետականության փլուզման գործում: Վրաց հասարակության ծագման-կազմավորման հարցը ցարիզմի դեմ պայքարի ժամանակաշրջանում: Վրաստանի և աշխարհի պատմության բազում այլ հարցերի շուրջ այս աննման անձնավորությունը մեզ առաջնորդող կարծիքներ հայտնեց, և պետք է ասեմ, որ ես ընդհանրապես չզարմացա, թե որտեղ ու երբ է ընկեր Ստալինը ժամանակ գտել այս հատուկ հարցերի համար: Երբ դեմ առ դեմ նայում էի մարդուն, ով աշխարհի ազատագրման անչափ բեռը, ինչպես Ամիրանը, վերցրել էր իր ուսերին, և անվերջ էներգիայով օժտված, մարդկությանը հպարտորեն տանում է դեպի երջանկության գագաթ:

(1945) 19/12 Ն. Բ.":

ՀՅՈՒՐ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ (ՍՈՉԻ, 1945. 10. 20–23)

14.10. Ընկեր Կանդիդի մոտ. "Եթե հեղինակները համաձայն են, մի քանի նկատառում ունեմ "Վրաստանի պատմության" վերաբերյալ: Համաձա՞յն եք, թե՞ ցանկություն չունեք": Հավատում էի և չէի հավատում:

19.10. Ուղևորվելու օրը: Խառնաշփոթի մեջ եմ: Ոչ ոքի չեմ ասում, որ մեր հյուրընկալության համար չպատրաստվեն: Կդիտարկվի որպես անհամեստություն: Այսօր պետք է ներկա լինեմ Բարաթաշվիլու օրվան, ինձ և Սիմոնին հրավիրել են ...

19.10. Կայարանում: Ծինամձղվրիշվիլին[3] *ստեթոսկոպով (լսափողակ – Հ. Խ.)... Ընկեր Կանդիդն էլ է եկել: Էքսպրես Թբիլիսի–Սոչի: Ընկեր Կանդիդի մարտավարականորեն հասարակ լինելն ու բարեսրտությունը և մեր հյուրընկալի "Էպիկականորեն հասարակ լինելը" հանդարտեցնում է իմ նյարդայնությունը (չնայած այս հուսալի բանաձևը ընկեր Ստալինի հետ հանդիպման համար մի քիչ վտանգավոր է: Այն ամբողջը չէ, և Ստալինին տեսնելու ուրախությունը պետք է հաշվի առնել: Հանճարի էպիկական պարզությունը կիսելը՝ մասնակցությունը, նման անսամբլին անդամակցելը դժվար է. հասարակ լինելը բանաձև է, և հանճարը այստեղ նույնպես կտրում է ինչպես ածելին...):*

Խելացի, գործունյա Կանդիդը չորրորդ անգամ խոսեց Ստալինի՝ հինգ տարվա համար նախատեսված աշխատանքների մասին: Ուրախալի հեռանկար է ...

20.10. Անձրևոտ առավոտ: Գագրայում այս վայրերը, որ նման են դրախտի, դեռ չէի տեսել: Այստեղ ինչ-որ տեղ հովազները պարտության են մատնել Դադիանիի և Գուրիելիի միասնական արշավին ... Դուրեկան տեսավայրը դանդաղեցնում է ամպամած օրը: Ծովն ալեկոծվում է, սակայն չի խառնվում: Անցանք Բզիփին, Գանթիադի կոլտնտեսություն (Պիլենկովո): Շփոթությունն ավելի ու ավելի էր այցելում ինձ: Ուր որ է կհասնենք:

Մերթընդմերթ չէի հավատում, չէի կարող պատկերացնել, որ մեր ժամանակների ամենամեծ մարդուն եմ տեսնելու՝ Աղլեր, Խոստա, Մացեստա, թունել... Ընկեր Կանդիդը չի կարող մեզ սփոփել. "Կարծում եմ՝ հենց այսօր ընկեր Ստալինը կընդունի ձեզ": Մենք ցանկանում էինք հետաձգել մինչև վաղը... Վճիռ հրապարակելու նման լարված եմ: Իմ պայուսակը սարսափելի է թվում. այն լի է գրքերով: Դրանք կարող էին անհրաժեշտ լինել ընկեր Ստալինի հետ հանդիպման ժամանակ... Սիմոնի հասարակ հանդարտությունը տեսնում եմ՝ նա նույնպես անհանգիստ է, ապա ինձ ինչ է պատահել:

*Սոչի, կայարան: Անձրև է մաղում: Ծանոթացանք գեներալ-լեյտենանտ Վլասիկի և ուրիշների հետ: Նստեցինք ավտոբուս: Քիչ անց հայտնվեցինք Մացեստայում՝ "*Дача № 1*": Պրոֆեսոր Միխեիլ Ծինամձղվրիշվիլին ինձ հետ մրցում էր հետ ընկնելու համար: Կոկիկ, երկհարկանի տան դիմաց կանգնեցինք,* вестибюль *ենք մտնում: Մեզնից առաջ ներս մտնողները հանում էին իրենց վերարկուները, տալիս ինչ որ մեկի ձեռքը... Ստալինը: Ընկեր Կանդիդը ներկայացրեց մեզ: Ծինամձղվրիշվիլին ժպտաց, ձեռքն առաջ սեղմեց և կրկին դիմեց Վլասիկին. "*Две комнаты наверху, две внизу. Разместите*". (Ինձ թվաց՝ Ստալինը հոգնած էր: Տխրեցի...): Ընկեր Չարկվիանին և Ծինամձղվրիշվիլին տեղավորվեցին վերևում, ես ու Սիմոնը՝ ներքևում: Պետք է հանգստանանք: Գործ անենք:*

Շատ քիչ ժամանակ անցավ, և ընկեր Կ. Չարկվիանին ներս մտավ. ընկեր Ստալինը մեզ էր ցանկանում տեսնել ...

---

[3] *Միխեիլ Դորոֆեևիչ Ծինամձղվրիշվիլի (1882–1956)–վրացի պետական գործիչ, խորհրդային բժիշկ-թերապևտ, Վրացական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1946 թ.), Վրացական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և նախագահության անդամ:*

Երբ եկանք, ընկեր Ստալինը խոսում էր Ծինամձղվրիշվիլու հետ: Կանգնած էր: "Садитесь, я привык стоять". *Նստեցինք: Կանգնած ծխամորճ էր ծխում, ժպտում էր.* "А вы Мачавариани помните? ", *– հարցրեց Ծինամձղվրիշվիլուն:* "Нет".

"Я вот имел несколько замечаний к вашей истории, точнее, два основных замечания".

Մեր գիրքը դրված էր իր դիմաց, թերթում էր: Չի բավարարում առաջին գլուխը: Ավելին է ուզում իմանալ վրացիների հարևանների ծագման, նմանության մասին *(ընդգծումը մերն է – Հ. Խ.)*[4], Առաջավոր Ասիայի հին մշակութային ժողովրդի հետ՝ Շումեր-Սուբար-Ուրարտուի մասին[5]: *Կարթագենը չի համարում հրեաների բարեկամ ... ինչպես նաև լիբիացիներին, բասկեր, էտրուսկներ ... "Հույները ուշ են եկել: Եգիպտացիները նրանց անվանում էին ավազակներ, թափառականներ" ... Այս ամենը ուսումնասիրված է ... Ավելի շատ բան է հարկավոր: Արևելքի պատմության ուսումնասիրման համար դուք ավելի լավ պայմաններ ունեք, քան արևմտաեվրոպացիները: Կովկասյան լեզուներ, ազգագրություն ... Շատ հակափաստարկներ ունեք եվրոպացիների կարծիքների հանդեպ ... (փաստարկված համարձակությունը գիտության մեջ, անարգանքը տիրող կարծիքների խախտման մեջ):* Հայերը ուշ են եկել, երևի հեծելազորը գրավել է Ուրարտուն: Բնակչությանը վտարել են կամ խառնվել ...: *Լեզվի ընթացաշրջանի վերաբերյալ Մառի տեսությունը չի անհանգստացնում: Լեզվի հարցը հարևան ժողովուրդների համար պարզելու-հստակեցնելու գլխավոր հարցն եմ համարում ... Լեզվի կառուցվածքը շատ անհատական և հստակ իրողություն էր պատկերացնում: Գողանում էր վրացերենի տարբերությունները, կարդում էր վրաց և մթիանեթիի այսրկովկասյան ժողովրդի լեզուների փոխկապակցվածության մասին ...*

---

[4] *Այսուհետ բոլոր ընդգծումները մերն են:*

[5] *Հետաքրքրական է, որ հայտնի ուրարտագետ Գ. Մելիքիշվիլին, ով 1946 թ. դարձավ կոմկուսի անդամ, իր հետագա աշխատություններում, այդ թվում՝* "Вестник древней истории" *գիտական հեղինակավոր ամսագրում 1953 թ. լույս տեսած* "Урартские клинообразные надписи" *հոդվածաշարերում, ինչպես նաև 1960 թ. հրատարակված համանուն ծավալուն աշխատությունում, փորձ է կատարում այս կամ այն անհայտ ու մոտավոր նշանակության ուրարտերեն բառերը, ինչպես նաև որոշ տեղանուններ բխեցնել քարթվելական արմատներից՝ ամենից հաճախ հիմնվելով բառերի արտաքին նմանության վրա: Բացի այդ, Գ. Մելիքիշվիլին աշխատում է համոզել ընթերցողին, որ դեռևս նախաուրարտական և ուրարտական շրջանում Հայկական լեռնաշխարհը՝ մասնավորապես նրա հյուսիսային, արևելյան և հյուսիսարևելյան հատվածները, այս կամ այն չափով բնակեցված են եղել քարթվելական ցեղերով ու ցեղամիություններով: Հարկ է նշել, որ նախքան Գ. Մելիքիշվիլու գիտական ասպարեզ մուտք գործելը, վրաց գիտական շրջանակներում ընդհանուր առմամբ չէին դիտարկվում նման մոտեցումներ կամ առնվազն դրանք "գիտականացված" չէին, հետևաբար, ակնհայտ է երիտասարդ ուրարտագետի վրա ստալինյան հայացքների ազդեցությունն ակադեմիկոսներ Ս. Ջանաշիայի և Ն. Բերձենիշվիլու միջոցով:*

Լեզվի ձևակերպումը պատկերացնում էր որպես հազարավոր տարիների աշխատանքի պտուղ (Формирование языка – это результат тысячелетней работы)*: Մտածում էր նրա մասին, որ Մառը իրեն երկու նամակ էր գրել երկար պարբերություններով և բարձր ոճով... Ասում էր՝ չեմ պատասխանել: Գոնե գիտակցում էր, որ Մառը ուշադրության արժանի շատ բան ունի:* Հավատում էր Պավլովին, Օրբելու ֆիզիոլոգիային կասկածանքով է նայում: Երկրորդ Օրբելուն, "որը նստած էր հուշարձանների վրա" (над арх. памятниками что сидит), էլ ավելի չէր հավատում:

Կոմարովը Օրբելուն առաջարկում էր ակադեմիայի նախագահություն: Կոմարովը (выступить словом не может, докладывать не может) հին ակադեմիկոսներին այնքան էլ սուրբ չի պատկերացնում:

Ստալինի երկրորդ դիտողությունը վերաբերում էր մեր պատմության ավարտին: Երևում է՝ մեր տեքստն այնպիսի տպավորություն չի թողնում, ինչպիսին ցանկանում ենք: Անհրաժեշտ էր գտնում, որ վերջում ասվի Վրաստանի ընտրության վերաբերյալ, որ Վրաստանի վերջը տվեցին ֆեոդալական բաժանվածությունը և բարդ արտաքին գործոնները, որ Օսմանյան կայսրությունն ու Իրանը միշտ անընդունելի են եղել. Իրանի հպատակության տակ Վրաստանին ֆերեդրանացում էր սպասվում, իսկ Օսմանյան կայսրության հպատակության տակ՝ туречина *(ֆեոդալական հարաբերությունների ամենաբարբարոս ձևը) ... որ Ռուսաստանը (ընտրությունը), ճիշտ է, չարիք էր, սակայն պատմական այն պայմաններում՝ փոքրագույնը: Ոչինչ չենք ասում: Ամբողջովին ճիշտ նկատողություն է* (это было зло, но в тех исторических условиях это было наименьшее зло)*: Իմ բանաձևը ճիշտ էր համարում, որ Վրաստանը եվրոպական երկիր է եղել և որ նա էլի կվերադառնա եվրոպական զարգացման ճանապարհին ... (Հետևաբար, ինձ անհրաժեշտ է վերջին պարբերությունը՝ պարսիկներ–օսմանցիների մշակույթի բացակայության, Վրաստանի եվրոպականության և Ռուսաստանի հետ նրա կապի առաջընթացի մասին): Թերթում է գիրքը ... "Հերակլը լավ մարդ է եղել, պայքարել է Վրաստանի միասնականության համար ... ": Ծինամձղվրիշվիլին աշխուժացավ (արդյո՞ք ցանկանում էր մասնակցել զրույցին).* "А мне кажется, что тут Ираклий недостаточно выпукло показан*". Ինչ կարող ենք անել: Ընթերցողի անձեռնմխելի իրավունքն է: Ընկեր Ստալինը չհամաձայնեց.* "Нет, я думаю, он достаточно выпукло показан*". Ծինամձղվրիշվիլին լռեց ...*

Սասկաձեին հավատում է, չնայած նրա սխալները լավ գիտի (սիրում է Անտոնովսկայայի ռոմանը):

<...> ... Հավանում է Դավիթ Շինարարին ...

Ճաշի հրավիրեց: Ծառայող կինը սեղան է բացում ... Ընկեր Ստալինը քայլում է ... Գորիի հոգևոր ուսումնարանն ու վարժարանն է հիշում: Ծինամձղվրիշվիլին էլ է փորձում ինչ-որ բաներ հիշել անցյալից ...

<...> ... Քարտեզները տվել են, որպեսզի նկարեմ: Լավ եմ նկարել: Ձեռքին իմ աշխատությունն է: Գովում է, հասցնում ամպերին: Հետո էլ նայում է: Ես գլուխս իջեցրի՝

*ավարտեց: Կանչեց ինձ. “*Это я тебя хвалил, несчастный*” և գրեց՝ երևում է իմ գովասանքը չի հավանել:*

<…> … Նստեցինք ճաշի: Հինգ հոգի ենք: Ստալինն ափսեներից վերցրեց կափարիչները, նայեց գինիներին: Կոնյակ լցրեց: Մեզ առաջարկեց: Ստիպված էինք: Նստեց և անցավ ճաշի: Մենք նույնը արեցինք:

*Հյուրասիրում է ընկեր Ստալինը, թամադայություն առաջարկում, կատակներ է անում: Զգձգել չի սիրում[6]: Մեկ-մեկ աշխատանքային զրույցներ են լինում Կանդիդի և ընկեր Ստալինի միջև: Սրամիտ է (ամեն հարցի փաստաթղթավորումն անպայման պահանջ է: “*Я думаю*”-ի փաստարկն անհիմն շատախոսության հոմանիշն է...): Ընկեր Կանդիդը գործով, ռազմավարությամբ, փաստաթղթերով հստակ կանգնած է: Ընկեր Ստալինը հավանում է նրան ... գործից խոնարհ պաշտոնի է անցնում: Կենաց է ասում (սեղանի շուրջ նստածներին չեն վերաբերում կենացները): Վերջացրինք ճաշը, գնացինք հանգստանալու: Ի՞նչը կհանգստացներ: Ուրախությունն այնպես էր պատել, որ կողքերիս թևեր էի զգում: Ոչ էլ Սիմոնը հանգստանալու ցանկություն ունի: Խոսում ենք տպավորությունների մասին ...*

Ժամը 8-ին նորից ընկեր Ստալինի մոտ էինք: Թեյ հյուրասիրեց, մեր պատմության մասին զրույցները շարունակվում են: Հարցը նորից վերաբերում է հնագույն շրջանին. զարմացնում է՝ երբ է կարդացել այս գրականությունն Արևելքի պատմությունից[7]...

---

[6] Ի. Ստալինը, չնայած ռուսական միջավայրում մշտապես գտնվելուն, պահպանել էր վրաց ժողովրդական կենցաղը, հյուրասիրության և հյուրընկալության ավանդույթներն ու սովորույթները:

*[7] 2011 թ. Ս. Պետերբուրգում խորհրդային ականավոր ուրարտագետ Բ. Բ. Պիոտրովսկու հիշատակին լույս տեսած գրքի նախաբանը սկսվում է հետևյալ տողերով. “*В 1951 г. Сталин читал статью Б. Б. Пиотровского “Урарту”(1951). Читал раздраженно, с карандашом в руках. И по всему было ясно, что взялся он за нее не просто так*” (Б. Б. Пиотровский. История и культура Урарту. СПб., 2011, с. 7). Ինչպես ասվում է հաջորդ տողերում, Ստալինին այդ հոդվածը, որը հրատարակվել էր “*По следам древних культур*” (1951) ժողովածուում, ուղարկել էր հատուկ նպատակով և մեկնաբանություններով “Պրավդա”-ի խմբագրությունը: Ժողովածուում տեղ գտած մյուս հոդվածները Ստալինը չկարդաց: Նրան հատկապես դուր չէր եկել հոդվածի նախաբանում Բ. Պիոտրովսկուն տրված “Ուրարտուի առաջին հայտնագործող” գովասանքը: Ստալինին, ամենայն հավանականությամբ, հանգիստ չէր տալիս այն իրողությունը, որ խորհրդային ժողովրդի պատմական ինքնության տարրերից էր այն, որ Ուրարտուն “ԽՍՀՄ տարածքում հնագույն պետությունն” էր: Հատկապես այն, որ Կարմիր բլուրի (Թեյշեբաինի) պեղումների մասին գրում էին դասագրքերում, պատմում էին դպրոցական դասաժամերին, համալսարանական դասախոսություններին: Բ. Պիոտրովսկին Լենինգրադի շրջափակման տարիներին գրած “*История и культура Урарту*” (1944) աշխատանքի համար 1946 թ. արժանացել էր Ստալինյան մրցանակի: Այդուհանդերձ, վերը նշված ժողովածուի էջերին Ստալինի ձեռքով գրված զազրելի “*ха-ха!*”-ները, ընդգծումները, զիգզագներն ու ալիքաձև գծերը կասկածի տեղ չեն թողնում, որ նա դժգոհ էր*

Առաջնորդող ուղղություններ էր ցույց տալիս … նորից անդրադառնում է քարտեզների հարցին (Սիմոնի խնդրանքով), անհրաժեշտ էր գտնում քննարկում անցկացնել Մերձավոր Արևելքի պատմության հնդեվրոպական տեսակետից լուսաբանված տեսությունների գործնական քննադատությամբ (հարցնում է, թե ուր է Հրոզնին, չի հավանում Լեման Հաուպտին …)[8]*:*

Թելեցինք: Կանդիդը բարձրացավ իր սենյակ (ինչ որ բան էր ուզում բերել): Սիմոնը պատմության ռուսերեն թարգմանությունը տվեց ընկեր Ստալինին: Նա դա այնպես հասկացավ, իբր, մենք իր նկատողությունները չենք ընդունում: Ժպտալով հարցրեց: Սիմոնը գույնը զցած պատասխանեց: Ընկեր Ստալինն այդ ժամանակ ասաց. "Это у вас хорошая книга выйдет … ". *Դա մեզ համար ամենաբարձր գնահատականն էր, որ կարող էինք պատկերացնել: Մեր ուրախությունը նույնպես հասկանալի է: Դեռևս թեյի ժամանակ ընկեր Ստալինը նշեց, որ գրքի ապրոբացիայի մասին ոչինչ չկա: Դա նրան դուր չէր եկել: Պահանջեց, որ այս գիրքն ապրոբացված լինի ազգային կոմիսարների խորհրդի կողմից* (ведь по этой книге должны будут равняться истории Украины, Белоруссии и других республик)*: Ընկեր Ստալինի հայտարարությամբ՝ առայժմ, իհարկե, Խորհրդային Միության ժողովրդի ոչ մի պատմություն գոյություն չունի:*

/23.10. Ժամը 3-ն է, գնում ենք հրաժեշտ տանք ընկեր Ստալինին: Մնացածը կգրեմ Թբիլիսիում/:

Դա (ԽՍՀՄ ժողովուրդների պատմությունը) կուսումնասիրվի այն ժամանակ, երբ յուրաքանչյուր հանրապետության պատմությունն ուսումնասիրված կլինի: Սիմոնի դիտարկմանը, որ "Խորհրդային Միության պատմության" աշխատողները (հեղինակ-

---

մնացել: Առաջնորդի նման կտրուկ արձագանքը կապված էր Ուրարտու, Հայաստան, հայ, հայոց լեզու, հայկական մշակույթ հիշատակությունների հետ՝ չնայած, որ տեքստում դրանք քիչ են հանդիպում: Որոշ վկայությունների համաձայն՝ կյանքի վերջին տարիներին ինտերնացիոնալիստ և ազգայնականության հակառակորդ Ստալինը հոգեպես վերադարձել էր իր ազգային արմատներին և հետզհետե սկսել էր վերածվել վրացի շովինիստի (*տե՛ս* Б. Б. Пиотровский. История и культура Урарту, с. 7–9. *Նաև՝* Б. С. Илизаров. Тайная жизнь Сталина. М., 2003, с. 261–267)*:*

[8] *Խորհրդային առաջնորդը հուշագրության այս և հաջորդ այլ հատվածներում մեծ նշանակություն է տալիս կովկասյան ժողովուրդների պատմությանն ու ազգագրությանը՝ դրանք մրցակցության մեջ տեսնելով հնդեվրոպաբանության (այդ թվում՝ հայագիտության) ձեռքբերումների հետ: Տպավորություն է ստեղծվում, թե Ի. Ստալինն այդպիսով ցանկանում էր կովկասյան ժողովուրդներին՝ մասնավորապես վրացիներին, ներկայացնել տեղաբնիկության ու բարձր մշակույթի կրողների դիրքերից, և, կարծես թե, ըստ իրեն՝ մինչ այդ եվրոպական պատմաբանները բավարար չափով ու պատշաճ խորությամբ չեն ուսումնասիրել այդ խնդիրները, և լինելով հնդեվրոպացիներ՝ առաջնահերթություն են տվել հնդեվրոպաբանությանը՝ անտեսելով կովկասյան ժողովուրդների պատմության և ազգագրության ուսումնասիրությունը:*

*ները, պրոֆեսոր-դասախոսները) այդ պատմությունում նոր բովանդակություն չեն ավելացնում, այլ նկատի ունեն Ռուսաստանի պատմությունը և, որ, նրանց կարծիքով, ստացվում է՝ միայն անունն է փոխվել, Ստալինն ավելացրեց. "*Да. Историю России без Украины и Белоруссии*". Իսկ անվանումը փոխելու մասին ժպիտով և միգուցե մի փոքր հեգնանքով նշեց. "*Да. Перемена этого названия нам стоила революции. Но ведь революции происходят не из-за названий*" (միտքը սա էր, հնարավոր է բառացիորեն փոխանցված չլինի):*

Խոսք եղավ Ուրարտուի հայկական տեսության մասին: Ստալինի կարծիքով, պարզ է՝ մինչ հայերի գալն այստեղ բարձր մշակույթի տեր մարդիկ էին ապրում: Եկան քոչվոր հայերը: Հայկական տեսությունը հիմք չունի, հայերը հնդեվրոպական լեզվի ժողովուրդ են[9] (*Люблю – ишь՝ սիրում եմ, սիրում ես՝ Ստալինի օրինակներն են):* Смешанные с Грузинами. *Ընկեր Ստալինի* Грузины*-ն ավելի լայն հասկացություն է, քան քարթլ-զան-սվանականը: Ընկեր Ստալինն այս եզրույթի ընդլայնման անհրաժեշտություն է տեսնում: Նա այստեղ նույնպես հանձարեղ է. պատմությունը գիտություն է, ճշմարտություն, այն փաստարկված սիլոգիզմ է, իրական և ոչ թե ֆորմալ ու այդքանով ներկայի հետ համաձայնության մեջ է: Գիտությունը պետք է այս համաձայնությունը հայտնաբերելու գիտելիք ունենա ... (ճշմարտություն է՝ "վրացի" եզրույթը պետք է ընդլայնվի: Դա անհրաժեշտ է: Ինչպես պատմական գիտությունների տեսանկյունից, այնպես էլ այն ժամանակվա Վրաստանի քաղաքականության տեսանկյունից ...): Հարցրեց Սիմոնին՝ հնարավո՞ր է՝* хетско-грузинская группа. *Սիմոնը ասաց.* "Грузинская*-ն փոքր-ինչ համարձակ է երևում": "*Боится*",– ժպտաց Ստալինը ...*

---

[9] *Նկատի ունի հնդեվրոպական նախահայրենիքից հայերի գաղթի վերաբերյալ տեսությունը: Մասնավորապես, խոսքն այն ժամանակ խիստ տարածված հայերի ծագման բալկանյան տեսության մասին է: Եթե եվրոպական հնդեվրոպաբանության և հայագիտության մեջ հնդեվրոպական նախահայրենիքի ու հայերենի կրողների նախնական տեղայնացման խնդիրները համարվում էին խիստ վիճարկելի և տեսական, ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինի հրահանգով այն որպես անքննելի ճշմարտություն փաստացիորեն պարտադրվեց ԽՍՀՄ ակադեմիական շրջանակներին ու ներառվեց բուհական և դպրոցական դասագրքերում: Այն բոլոր հետազոտողները, ովքեր այդ տեսությանը հակասող մոտեցումներ էին արտահայտում, խստորեն քննադատվում էին գիտական շրջանակների կողմից, և նրանց առաջ քաշած մոտեցումները պիտակավորվում էին որպես հակագիտական կամ մերձգիտական: Ներկայումս գոյություն ունեն հնդեվրոպական նախահայրենիքի ու հայերենի կրողների նախնական տեղադրության վերաբերյալ շուրջ մեկ տասնյակի հասնող տեսություններ, որոնցից որևէ մեկին արևմտյան գիտությունն առայժմ վերջնական գնահատական չի տվել, մինչդեռ ետխորհրդային երկրներում շարունակում են գերակա մնալ Ստալինի կողմից քաղաքական նպատակներով առաջ քաշված հայերի ծագման բալկանյան տեսությունը և դրանից բխող ենթատեսություններն ու եզրակացությունները:*

Հավանում է Տուրանին, չի հավանում Ստրուվեին, հավանում է Պավլովին, չի հավանում Ի. Օրբելուն*:*

Մի անգամ ասաց. “Ведь Грузия самостоятельна экономически и культурно *…”. Առաջնորդող խոսք է: Նրա ճիշտ ընկալումը, հասկանալն ու իրականացնելը մեր պարտքն է …*

Հետաքրքիր է. ես մինչև ընկեր Ստալինին տեսնելն այնպես էի պատկերացնում, որ նա սառը դրույթներով էր առաջ շարժվում: Պարզվում է՝ ընկեր Ստալինն ամեն մի դրույթ հանճարեղ կերպով փաստարկում էր, և ամբողջ դժվարությունն այդ փաստարկման հասկանալու-հայտնի դարձնելու, ընկալելու-ուսումնասիրելու մեջ է: Հետաքրքրվում էր Թբիլիսիի բնակչության կազմով, վրաց բնակչության տեղաշարժմամբ … երբ ընկեր Չարկվիանին ասաց, որ վրացիներն ավելի շատ են, քան մնացած այլ բնակիչները, նա նշեց. “А все-таки грузины не имеют абсолютного большинства *…”. Հետաքրքրվում էր Ա-խալցիխեի կողմերում՝ Քլուխորի, Յալբուզի, Ախալ Շավիի շրջաններում վրացիների վերաբնակեցման հարցով:*

Հետաքրքրվում էր՝ աշխատում են, թե՞ ոչ աջարացիները, քոբուլեթցիները, նրանց կանայք … նշում էր, որ աբխազները ծույլ են …

Կշռադատում էր մեր կառավարության միջոցառումները Հարավային Օսեթիայի և Աբխազիայի դպրոցներում (վրացացում):

Գովաբանում է հյուսիսային օսերի պահվածքն այս պատերազմի ժամանակ, նշում է չեչեն-ինգուշների վրդովեցուցիչ պահվածքը և նրանց արժանի պատիժը …

Օսմանյան էմիսարների աշխատանքի պատճառով են այս դժբախտ ադիգեյցիները և չեչեն-ինգուշները նման պահվածք ցուցաբերել:

Իսկ հիմա Օսմանյան կայսրությունը չոքել է և երկու ոտքն էլ ծալել … [նշում է պարսիկների-օսմանցիների մշակույթի բացակայությունը (ապամշակութայնությունը): Ինչպես հիմա, այնպես էլ ամբողջ ուշֆեոդալական դարաշրջանում: Այս միջավայրը ես պետք է ընդգծեմ պատմության մեջ]:

Հետաքրքրվում է մեր լեզվագիտությամբ, Մերձավոր Արևելքի ուսումնասիրման գործով [(այստեղից մենք առաջնորդող եզրակացություն պետք է անենք): Հետաքրքրվում է մեր համալսարաններով, դրանց որակական տվյալներով: Զգում եմ՝ ցանկանում է լսել, որ մեր համալսարանները ոչ մեկից չպետք է հետ մնան …)]:

Ստալինն ատում է ընդհանրական բառակապակցություններ, անապացուցելի դատողություններ. “Այս ախտով հիմնականում կոմունիստներն են տառապում. նրանք սիրում են համաշխարհային մասշտաբով քննարկումներ անցկացնել, խոսում են դիալեկտիկական մատերիալիզմի մասին և փաստարկված երկու բառ չեն կարող ասել: Նույնիսկ գրագետ արձանագրություն չեն կարող կազմել, կազմակերպչական հավակնություններ ունեն”: Հիշում է Բուխարինի հավակնությունները. “Տաբատը չէր կարողանում ձգել, միշտ նրանից ցած էր սահում, չեմ հիշում որևէ նիստի մասնակցենք և

ուրիշի վերարկուն, ուրիշի գալոշները կամ գլխարկը չհագներ և այս թշվառը ցանկանում էր կազմակերպչական հարցերով զբաղվել”:

Ընկեր Ստալինն անհրաժեշտություն էր համարում “մեր երիտասարդների ուսման ծրագրավորումը”. “Мы же гос. хозяйство планируем, а хозяйство без людей разве бывает?*”. Դեմ չէ, որ մեր երիտասարդները բժշկական ֆակուլտետի հակվածություն ունեն, սակայն անհրաժեշտ էր համարում այլ ֆակուլտետների հզորացումը. իրավաբանական, պատմական, ինժեներական: “Իմ կինն ասաց՝ ցանկանում եմ ինժեներական դիմել”, ես ուժ գործադրեցի և տարա պատմական: Սա ավելի անհրաժեշտ ոլորտ է: Մենք այստեղից լավ քաղաքական գործիչներ կստանանք: Անհրաժեշտ է իրավաբանական ոլորտի հզորացում: Մենք բազում իրավաբանների կարիք ունենք: Աշխատանքային փաստաթղթերի դասավորում, արտահայտման ճշտություն, այդ գործը մեզանում բաց է թողնված, պետք է զբաղվել”: (“Մերոնք ընտելացել են պատերազմելուն, ռազմական գործ են սովորել, իսկ դիվանագիտության չեն տիրապետում և հաճախ վտանգավոր սխալներ են թույլ տալիս”):*

(Ընկեր Ստալինի համար օտար է կոլտնտեսության հանդեպ կոպիտ բռնությունը, նյութական հետաքրքրվածությունն այստեղ որոշիչ բնույթ պետք է կրի):

Ընկեր Ստալինին դուր չի գալիս հայերի պարծենկոտությունը պատմության մեջ (ընդհանրապես ուշադրություն է դարձնում հայերի այս կողմին) և բացատրում է այս իրողությունը նրանով, որ պատմությունը հայերին երբեք երես չի տվել, հիվանդագին “իստորիզմ”-ով են տառապում*:*

Նշում է նաև Օսմանյան կայսրության հետամնացությունը: Համեմատում է Խորհրդային Ադրբեջանի հետ և վերջինիս դասում է 3 անգամ ավելի բարձր ...:

<...>... 22.10. Ժամը 5-ին ճաշեցինք առանց Ստալինի: Միջանցք դուրս եկա և պատահաբար հանդիպեցի ընկեր Ստալինին: Ձեռքիս թերթ կար: Ինձ նայեց, ժպտաց, հարցրեց. “Ի՞նչ է տեղի ունենում երկրում”: “Խաղաղություն”,– ես նույնպես ժպիտով պատասխանեցի: “Ինչ որ բան կերա՞ք”: “Այո, շնորհակալություն”: “Չեմ հավատում”,– պատասխանեց և շարունակեց. “А где документ?*”. Խնդաց և գնաց:*

Ընկեր Ստալինը հետաքրքրվում էր երաժշտությամբ: Հատկապես սիրում է գուրիական երաժշտությունը:

<…>… Ընկեր Ստալինին հետաքրքրում է վրացական ազգագրությունը (հերկման զենքի պատմությունը): Պատմական խնդիրները լուծելիս ազգագրությանը մեծ նշանակություն է տալիս:

Հետաքրքրվում է մեր հնագիտությամբ: Շատ էր հավանել իրերը: Ուշադրությամբ լսում է Բագինեթիի պեղումների մասին պատմությունները ... Հնագիտական պեղումների հաճախակիացման անհրաժեշտություն է տեսնում՝ մասնավորապես Արևմտյան Վրաստանում:

Օսմանյան Վրաստանը, երևում է, ցավալի է իր համար: Քարտեզի վրա Իշխանն է փնտրում (նկարը ցույց տվեցինք): Ուսումնասիրում է Է. Թաղաիշվիլու "Հնագիտական արշավախումբ Թորթումի կիրճում" գիրքը: "Այս ամենը հիմա ոչնչացված կլինի …": Խոսում է լազերի վերաբերյալ: Նրանց լեզվի մասին հարցեր է տալիս: Նշում է Զմյուռնիայի և Ստամբուլի մոտակայքում վրաց բնակչության մասին:

Բնութագրում է վրաց տոհմերին՝ քիզիկղելներին, քարթլիներին, հատկապես սիրում է գուրիացիներին: Հիշում է 1902 թվականից գուրիացի գյուղացիների համարձակությունը, 1905 թվականից նրանց անկեղծությունը, մենշևիկ գուրիացիներին (հիշեցնում է Նոյ Ժորդանիային՝ "Նոյ Պետրեին" – "Նոյ Խունչուզային", Բենիա Չխիկվիշվիլուն, Կարլո Չխեիձեին: Նրանց համարում է հարգանքի նմուշ: Ակակի Ծերեթելուն, Լորթքիփանիձեին, Արսենիձեին):

<…>… Բնութագրում է քաղգործիչներ Կարլո Չխեիձեին, Խոմերիկին, Ռամիշվիլուն, Ժորդանիային, Ծերեթելուն … Բնութագրում է Ռուզվելտին, Չերչիլին, Էտլիին, Տրումենին, Բորնսին, Բևինին …

Նշում է ռուսների առողջություն-անկոտրումությունը, գերմանացիների առողջ լինելը, անգլո-ամերիկացիների առողջ լինելը (նրանց լավ սնունդը, ռեժիմը, հիգիենան): Ամերիկացիների կոպտությունը (տեխնիկայում), իտալացիների շատախոսությունը, իսկ տեխնիկայի ոլորտում հաջողությունները:

<…>… Ռումինիային մեծ ապագա է կանխատեսում. հարուստ երկիր է (անտառ, հաց, գինի, նավթ, հանքեր):

Հետաքրքրվում է Վրաստանի ռոգման համակարգերով (քարտեզի վրա փորձում է գտնել), դրական է նայում Սամգորիի խնդրին, միայն պահանջում է, որ Վրաստանում բամբակ նույնպես ցանեն, հետաքրքրվում է Վրաստանի ձեռք բերած շրջաններով … հետաքրքրվում է մետաղագործական գործարանով (խողովակներ), Քութայիսում ավտոմեքենաների գործարանով, էլեկտրաէներգիայի հարցերով, թեյով և Վրաստանի թեյագործական շրջաններով, նրանց մատակարարմամբ …

Հետաքրքրվում է գիտաշխատողների կյանքով և աշխատանքի պայմաններով … դրա համար հենց հիմա կփախչենք… Мы не могли уделить должного внимания научным работникам. Мы много их потеряли. Они безропотно, тихо гибли …[10]

---

[10] *ԽՍՀՄ առաջնորդն այստեղ անհասկանալի "չքմեղություն" է դրսե-վորում: Բ. Պիոտրովսկին իր՝ ետմահու հրատարակված* "Страницы моей жизни" *ինքնակենսագրական գրքում մանրամասնորեն ներկայացնում է, թե ինչպես են Էրմիտաժի և այլ գիտական հաստատությունների բազում հանրահայտ ու կարկառուն ներկայացուցիչներ ու գիտաշխատողներ 1935–1938 թթ. ենթարկվել բռնաճնշումների՝ մեղադրվելով տրոցկիստա-կան-բուխարինիստական խմբակներին հարելու կամ ազգայնականության մեջ: Թեև նրանց մեծամասնությանն ազատ են արձակել և վերականգնել նախկին աշխատանքում, այդուհանդերձ, մեծ է եղել խորհրդային գիտությանը հասցված բարոյական-մտավոր վնասը: 1935 թ. ՆԳԺԿ-ի կողմից ձերբակալվում է հենց ինքը՝ Բ.*

<…>… Անհանգստանում է Զաքաթալայի վերաբերյալ: Սերգոյին կշտամբում է:

Ասում է՝ ազգային հարցի հանդեպ կոմսոմոլական մոտեցման հետևանք է, ցանկացել է Բորչալուն հանձնել հայերին…

Որքան են սիրում ընկեր Ստալինին: Ինչպես է մեկ-մեկ կատակներ անում սեղան բացող կնոջ նկատմամբ … ինչպես են հոգ տանում, որ ընկեր Ստալինը չանհանգստանա:

Ընկեր Ստալինը ծնողի նման ջերմ է, ժպտացող, ուրախ, աստղի նման, արագ մտածողությամբ:

Մի բան հարցնես՝ կպատասխանի: Իրը ոչ էլ լսում է: Սուր պատասխանը միշտ պատրաստ է…

Բաց քարթլիական ծիծաղ … անհապաղ քննադատական մտածողություն ունի:

"Մարքսը խաբում էր կոմունաներին, որ համակրանքով էր նայում ամբսոլյուտիզմի դեմ պայքարին: Աբսոլյուտիզմը պրոգրեսի տեսանկյունից ավելի ընդունելի է՝ համախմբում է ժողովրդական ուժերին, դասերի պայքարն ընդլայնում է, խորացնում":

Դժբախտ Իվան Ահեղ. "Նա մահապատժի է ենթարկում երկու հոգու, հետո երկու ամիս աղոթում է, ներում հայցում Աստծուց", եթե նա համարձակորեն հարվածեր, գուցե 1605–1613 թվականների իրադարձությունները չլինեին:

<…> … Ըստ Ստալինի՝ "Քրմերը՝ каста ученных звездочетов, инженеров *".*

"Քրիստոնեությունը ոչնչացնում էր ստրկությունը և ֆեոդալական հարաբերություններ էր ստեղծում: Ազնաուրների դերը ռազմական, տնտեսական (տնտեսության առաջատարներ, բարելավում բերողներ), հանրության ձուլումը:

<…> … Ստալինն ու եկեղեցին. "Պատերազմին պատասխանեք պատերազմով: Այսօր հոգևորականությունն ընդհանրապես այլ կերպ է պահում իրեն, և մենք մեր ծրագրի համաձայն հավատքի ազատության վերաբերյալ ազատություն տվեցինք եկեղեցուն":

Պիոտրովսկին, ով որոշ ժամանակ բանտում անցկացնելուց հետո առանց որևէ բացատրության ազատ է արձակվում և ապա արհմիությանը դիմելով՝ վերակազմվում նախկին աշխատանքում: Գիտաշխատողների նկատմամբ բռնաճնշումները նոր թափ են ստանում 1937 թ., որին զոհ են դառնում բազում պատմաբաններ, հնագետներ և հարակից այլ գիտակարգերի ներկայացուցիչներ ԽՍՀՄ բոլոր հանրապետություններից (տե՛ս Б. Б. Пиотровский. Страницы моей жизни. М., 2009, с. 102, 114, 121–125, 144–145*): Մեկ այլ ականավոր խորհրդային գիտնական Ի. Մ. Դյակոնովը, 1995 թ. լույս տեսած* ,Книга воспоминаний՝ *գրքում մանրամասնորեն ներկայացնում է ոչ միայն ստալինյան ժամանակաշրջանի բռնաճնշումները և թելադրված գաղափարախոսական հայեցակարգերը գիտնականների հանդեպ, այլև՝ տվյալ ժամանակահատվածին բնորոշ բացասական իրողություններն ու բարքերը:*

<…> … 19-րդ դարի Վրաստանի պատմությունը ըստ Ստալինի. Վրաստանի հասարակության աճ և ցարիզմի դեմ պայքար: Առաջին բանաձևը ներառում է Վրաստանի զարգացում "Քարթլի-Կախեթի-Իմերեթի-Սամեգրելոյից" Վրաստան: Վրաստանից (քրիստոնեական) մինչև Վրաստան (ազգային), ֆեոդալական հարաբերություններից բուրժուական հարաբերություններ, գյուղացուց մինչև պրոլետարիատ, արհեստավոր-վաճառականներից՝ կապիտալիստներ …

Երկրորդ բանաձևը ներառում է վրաց հասարակության ցարիզմի դեմ պայքարի տարբեր փուլեր:

Վրաց ֆեոդալների պայքարը ցարիզմի դեմ: Բատոնիշվիլիները, թավադները (ժողովրդի անունից փորձում էին ներկայանալ "ֆեոդալական միապետական" ընդդիմություն) այս շարժման պարտությունը 1832 թվականին … գյուղացիների պայքարը ցարիզմի դեմ: (Հատկանշական են 1841, 1856 թվականների գյուղացիական շարժումները):

Թերեքի ջուր խմածների պայքարը ցարիզմի դեմ …

Ազգի (բուրժուական) ստեղծման ժամանակ ազգայնականության (բուրժուազիան և իր պայքարը ցարիզմի դեմ), պրոլետարիատ/ինտերնացիոնալիզմ/ և իր պայքարը ցարիզմի դեմ …

Եթե հաղթեր բուրժուական դասակարգը, կստանայինք անկախ բուրժուական Վրաստան: Հաղթեց պրոլետարիատը և ստացանք Խորհրդային Միությունում անկախ սոցիալիստական Վրաստան …

Հերակլի կտակի խախտում կլիներ, եթե հաղթեր բուրժուազիան. "Իրական անկախ բուրժուական Վրաստան չէր կարող լինել և իր գործող ուժերի պառակտումը վրաց ժողովուրդը չէր կարող իրականացնել …":

Ըստ Ստալինի՝ պատմությունը պետք է լինի հայրենասիրական (խորը ճշմարտություն է: Հայրենասիրության և պատմության հարաբերությունների մասին ինչ-որ տեղ նկատառում ունեմ, որտեղ առաջ եմ քաշել այս դրույթը): Խոսքը վերաբերեց նաև "Չարյաց փոքրագույնին"՝ Վրաստանի միացումը Ռուսաստանին, Ռուսաստանի առաջնահերթ դերին (օբյեկտիվորեն) և այսպես ներկայացված Վրաստանի պատմությունը разве не достаточно патриотично будет? *և հավելեց՝ միևնույն ժամանակ պետք է ներկայացված լինի վրաց հասարակության աճը ցարիզմի դեմ անվերջ պայքարի պայմաններում:*

Ընկեր Ստալինի պատմական տեսանկյունից՝ "հետամնացներին ծեծում են" (ցարական Ռուսաստանի պատճառով է ասել) ամենից լավ երևում է մեր պատմության օգտակարությունը 19-րդ դարի պատմությունում …

Պատմությունը հայրենասիրական գիտություն է …

Այն հասկացողությամբ, որ հայրենասեր է հասարակության առաջնային դասը, գործող դասը …

<…>… Չարյաց փոքրագույն (այն միևնույն է չարություն է, չնայած փոքրագույն): Հերակլն ավելի լավ ելք չուներ … Князья доканали государственность Грузии.

Եզրակացություն. եթե դա չարություն է, ուրեմն Հերակլի ցանկությունը պայքարն է եղել, որպեսզի այդ չարությունը, որն ուղղորդում էր վրացիների բազմադարյա փախուստը ռուս ժողովրդի հետ կապերից, սկզբից ևեթ կանխվեր: Այսինքն՝ պայքար ազատության համար Ռուսաստանի հետ կապեր պահպանելով: Հերակլի այս ցանկությունը կանխատեսեց մեծն Բարաթաշվիլին, իսկ պրոլետարիատը, փաստացի, իրականացրեց այն:

,Перекрытьէ *... (Սակայն)՝ սկզբունքը օտար ուժեր օգտագործելու ընդունելի-անընդունելի լինելն է տարբերում: Եթե դա ծառայում է առաջընթացին, ընդունելի է, և ընդհակառակը:*

Զինաուրության դերը. ‘Цементирующий элемент феодального общества, воинство. Носители феодальной культуры *... ”.*

Քրիստոնեության դերը. ծառայում էր ֆեոդալական հարաբերությունների խորացմանը, ամրապնդմանը և ստրկության ոչնչացմանը: Այստեղից եզարակացություն. քրիստոնեությունը նոր (պրոգրեսիվ) հասարակության կրոնը, պրոգրեսիվ մեծ ուժ է:

Վրաց հասարակության զարգացումն ու պայքարը ցարիզմի դեմ (19-րդ դարի Վրաստանի պատմությունը մեկ նախադասությամբ):

*<…>…Դավիթ Աղմաշենեբելի (Շինարար–*Հ. Խ.*)՝* Абсолютизм на час *(ես նույն կարծիքին էի):*

Կասկածում է, որ Թիֆլիսում նույն տիպի կոմունաներ լիներ 11-րդ դարում, ինչպիսին եղել են եվրոպական քաղաք կոմունաներում: (Այո, կասկածելի է. եթե Թիֆլիսն ու վրացական քաղաքները այդպիսին լինեին, Դավթի աբսոլյուտիզմը մեկ ժամանոց չէր լինի) …

“Я за абсолютизм*”,– նշում է Մարքսի սխալը: Մարքսը ի հայտ է գալիս քաղաք կոմունաների կողմից պայքարի աբսոլյուտիզմի ժամանակ, նրանց կողմից: Երկրի միավորմանը, դասերի միջև պայքարի ընդլայնմանն ու ամրապնդմանն է աջակցում ...*

Օսմանական և իրանական մշակույթին չի հավատում [համամիտ է Մարքսի հետ. ֆեոդալական հարաբերությունների բարբարոսական աստիճան /իրոք, ֆեոդալական հարաբերությունների ցածր աստիճան է, ապա ինչ, երբ հողը մասնավոր սեփականություն էր (իհարկե ֆեոդալական), չէր մշակվում, և որտեղ խանը կամ փաշան աշխատող չէր ուղարկում, ֆեոդալ չէր կարող դառնալ, որտեղ նույնիսկ մշակված չէ ֆեոդալական էթիկա ...]

“Մարդկանց վերաբնակեցրին և մշակույթի տեսանկյունից մի ամբողջ աստիճան հետ քաշեցին”,– ասում է պարսիկների մասին (խոսքը վերաբերում է ֆերեյդանցիներին):

Եվ մի՞թե նման բան տեղի չի ունեցել բոլոր նրանց հետ, ովքեր կիսել են Իրանի կամ օսմանյան մշակույթը՝ Սամցխե Սաաթաբագո, Աջարիա ... և մնացած վրացիները կամ Ադրբեջանը ...:

“Մահմեդականությունը հաղթել է քրիստոնեությանը, հեշտությամբ, հայտնիությամբ, պրակտիկությամբ”:

Մտածում էր, թե ինչպես Քարթլիում իմացան ապստամբության վերաբերյալ կոչի մասին: Հեղափոխությունը պարտվել է, քարթլելները հավաքվել են: Եկել է Ստալինը և խորհուրդ տվել զերծ մնալ ելույթներից, որ դրա ժամանակը չի: Վիրավորված գոռացել են՝ դու նույնպես թավադների կողմն ես անցել: Չհավատացին: Դուրս եկան և խիստ պատժվեցին …

Կատակում է՝ հայերը ձեզնից առաջ անցան: Այս պատերազմում նրանք գեներալ Բաղրամյան ունեն: Իսկ դուք՝ վրացիներդ … Կանդիդն ասում է, որ մենք ավելի մեծ գեներալ ունենք: Ծինամձղվրիշվիլին պատրաստ է ասել, որ այդ մեծ գեներալը հենց Ստալինն է: Ընկեր Ստալինը, միևնույն է, հարցնում է (կատակով)՝ Դուք ո՞վ ունեք: Ասում եմ. “Դա մենք հայերին կասենք … ”: Ժպտաց … և խոսքը փոխեց՝ այն կենտրոնացնելով Լեսելիձեի շուրջ:

<…>… Հրեաների պահվածքն այս պատերազմում՝ Խորհրդային Միության ամենից քիչ հերոսներ (համամասնորեն) ունեն: Տնտեսական կազմակերպություններն ավելի լավ են վարում: Որտեղ մեկը հայտնվում է, ուրիշներին (այլ հրեաների) հավաքում է: Պատերազմով ուրիշները կգբաղվեն: Ոչ ոք չի հասցնի տաք և անվտանգ տեղ զբաղեցնել: Պետք է ասել, որ նրանց թվում կային նաև անվախ պատերազմողներ, հերոսներ, սակայն՝ հազվադեպ: Իսկ ընդհանրապես …

Ո՞վ է ընկեր Ստալինը (սովետական ազգային հայացք). ընկեր Ստալինը բոլորովին նոր մարդ է: Սովետական մարդ: Նա ազգությամբ վրացի է (ոչ միայն ծագմամբ), համոզմունքով՝ կոմունիստ, պրակտիկ գործունեությամբ պետական գործիչ (խորհրդային պետության և Խորհրդային Միության ստեղծող-կազմակերպիչ), բազմազգ սովետական պետության ղեկավար: Առաջին պարտականությամբ նա այս պետության, այս հայրենիքի, այս օրգանական միության, այս մշակութային միասնության հայրենասերն է: Եզրակացություն. սա նշանակում է, որ նա Վրաստանի հայրենասեր է: Ընկեր Ստալինը վրաց կոմունիստ է, նույնքան և վրացի հայրենասեր: Այսօր լինել հայրենասեր առանց Խորհրդային Միության նկատմամբ հայրենասիրության՝ հետամնացություն է, կոմունիստի համար անհամատեղելի մի բան (նաև հայկական, ռուսական, ուկրաինական և այլ տեսակի հայրենասիրությունը): Խորհրդային Միության կառուցվածքի հանճարեղությունը (հետագայում ամբողջ աշխարհի կազմակերպման մեջ) այն է, որ դա չի հակասում միութենական հանրապետությունների շահերին, դա հենց այդ հանրապետությունների շահերի համաձայնեցվածության մարմնացումն է:

Երբ ընկեր Ստալինն ասում է՝ “Ես ասել եմ վրացիներին”, նա այդպիսով չի հեռանում Վրաստանից, նրանում խոսում է Խորհրդային Միության մի պետական գործիչ, ով հավասար պայմաններով է խոսում յուրաքանչյուր միութեանական հանրապետության ժողովրդի՝ ռուսների (նրանք այդպիսին են և այդպես), հրեաների հետ: Նա, որպես Խորհր-

դային Միության ղեկավար, բոլոր միութենական հանրապետությունների հավասար իրավունքների արտահայտողն է: Նույն կերպ ասած՝ ընկեր Մոլոտովը կասեր՝ “Ես ասել եմ ռուսներին”, իսկ Միկոյանը՝ “Ես ասել եմ հայերին”:

<…>… Ընկեր Ստալինի պատմական մի արտահայտության համար:

“Перекрыть”. *ընկեր Ստալինի այս բանաձևն արդարացիորեն ընկալելու համար անհրաժեշտ է հիշենք իր սկզբունքը պատմական մտածողության մեջ՝ պատմությունը դասակարգերի միջև պայքար է (խոսքը դասակարգային հասարակության մասին է), այն ամենը, ինչ աջակցում է դասակարգային պայքարի ընդլայնմանը, խորացմանը, այսինքն՝ հանրային առաջընթացին, ընդունելի է, ցանկալի է: Այսպես է, օրինակ, ֆեոդալական հարաբերությունների հայտնվելը ստրկատիրության ոչնչացումից հետո, այսպիսին է եղել ֆեոդալական հարաբերությունների կառավարման աստիճանի ի հայտ գալը, այսպիսին է եղել աբսոլյուտիզմի համակարգի հայտնվելը ֆեոդալական խառնաշփոթի փոխարեն, այսպիսին է եղել բուրժուական հարաբերությունների հաղթանակը ֆեոդալական հարաբերությունների հանդեպ: Եվ այսպես շարունակ …*

<…>… Եթե նման ինչ-որ բան ծառայում է այնպիսի նպատակի, որը ենթադրում է հասարակության առաջընթաց կամ “կխորացնի դասակարգերի միջև պայքարը (դա ընդունելի է և հակառակը): Վերջինիս դեպքում դա հանցագործություն է, երկրի դավաճանություն: (“Երկիրը”, մեր տեսանկյունից, դասակարգային հարաբերությունների պարագայում այն դասն է ներկայացնում, որը, հիմնականում, առաջընթացի կրող է, որի հաղթանակը ենթադրում է դասակարգային պայքարի ընդլայնում-խորացում): Սակայն օտար ուժի ընտանեացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այդ ուժի բնությունը: Եթե այն արդարացնում է ընդունողի նպատակները, ապա արդարացված է: Սակայն եթե այդ օտար ուժը ոչնչացնում է դասակարգային պայքարի հիմքերը, ապա ընդունողը սխալ է (նպատակներն արդեն էական չեն): Երկրի հանդեպ նման սխալ թույլ տալը հավասար է հանցագործության: Իսկ քաղաքական գործչի սխալը դժվար է տարբերել հանցագործությունից”:

V–VI դարերում ազնաուրները հրավիրեցին պարսիկներին և վերականգնեցին թագավորի (հին) իշխանությունը, XI դարում ազնաուրները հրավիրեցին բյուզանդացիներին, Գիորգի 11-րդը հրավիրեց թուրքերին, Դավիթ Աղմաշենեբելին՝ ղփչաղներին: Սա “հրավերների ամենապարզ օրինակներն են, որոնք սկզբունքային վեճի առիթ են դարձել Դավթի կողմնակիցների և Դավթին դեմ հանդես եկողների միջև ... Իսկ հրավիրող Դավիթը “Շինարար” անուն է ստացել: Գիորգի Սաակաձեն հրավիրել է պարսիկների (և դա նույնպես սկզբունքային վեճի առարկա է դարձել, սակայն ի տարբերություն՝ Դավթի մեղադրողներն այն առավելությունն ունեին, որ “հրավիրված” Շահ-Աբասը Վրաստանը մի կողմ շպրտեց, այն դեպքում, երբ Դավիթը հրավիրված ղփչաղների հետ Վրաստանը “կառուցեց”: Նույն կերպ էին տրամադրում նաև Գիորգի Երրորդի դեմ ապստամբած թուրքերը, իսկ ուշֆեոդալական Վրաստանում կառավարության թե

ազնաուրների կողմից նման ձևով օսմանցիներին հրավիրելը սովորական երևույթ էր (Աթաբագ, Գուրիելի, Ռաճայի էրիսթավի, Աբաշիձե, Գիվի Ամիլախորի, Աբդուլա Բեգ, Քսանիի էրիսթավի, Ալեքսանդրե Բաքարի Բատոնիշվիլին, կախերի թագավոր Ալեքսանդրե Երկրորդը, Թեյմուրազը, Վախթանգ Վեցերորդը ռուսներին հրավիրում էին ոչ միայն օսման-պարսիկների դեմ: Ավելին Հերակլն ու Սոլոմոն Առաջինը: Երկուսի նպատակն էլ եղել է Перекрыть внутреннюю слабость *…". Հերակլի հեռատեսությունն այստեղ նույնպես երևում է. հրավիրված ուժին գնահատում է սեփական օգտա-գործման տեսանկյունից և փորձում է այս ուժը դնել ցանկալի սահմանների շրջանակներում, իսկ հնարավոր թե անհրաժեշտ սպասվող վնասից սկզբից ևեթ զերծ մնալ: Սա էր տրակտատը: Այնպես որ, Հերակլն օտար ուժեր հրավիրելու հարցը սկզբունքորեն դրեց և սկզբունքորեն լուծեց: Նա փաստացի հաշվի առավ հրավերի լավ և վտանգավոր կողմերը … իր կտակի պաշտպաններն այս գործում եղել են Լիոնիձեն, Սոլոմոն Երկրորդը, Բարաթաշվիլին, ճավճավաձեն, իսկ դեմքը՝ կոմունիստական կուսակցությունն ու առաջնորդ ընկեր Ստալինը: Գիորգի 13-րդը նույնպես հրավիրել է … Հույսը կորցրած հիվանդի նման):*

Տրակտատը (Գեորգիևյան– Հ. Խ.) վրացական տեսանկյունից, հրավիրված ուժի օգտա-գործումն է հօգուտ Վրաստանի: Այդպիսով, դրա խախտումն այս ուժի ազատագրումն է եղել … գրավման վերածված հրավերը՝ չարություն …

Երբ ընկեր Ստալինը խոսում է Ռուսաստանի նախաբուրժուական կենտրոնացման մասին և դրա պատճառներից մեկը (որն աջակցել է միացման-կենտրոնացման գործընթացի արագացմանը) արտաքին գործոնի փաստն է համարում (մոնղոլներից պաշտպանվելու անհրաժեշտություն է տեսնում: Սա այն խորը իրական-պատմական իրողության հետևանքով ստացած դրույթն է, որը ընկեր Ստալինն ասել է բազմիցս Перекрыть *"-ի տեսքով): Նամակ Բոլշակովին, մեր հետ զրույցի ժամանակ (և դա այն է, որ արտաքին փաստերը պետք է առանձնացնել ներքին փաստերից, արտաքին գործոններն անջատել ներքին զարգացումից, պատմության մեջ անհնար և արդարացված չէ, որ հանրության պատմությունը ոչ միայն ներքին հարաբերությունների արդյունք է, և ոչ էլ միայն արտաքին հարաբերությունների արդյունք: Այդ իրադարձությունները փոխկապակցված են, չնայած վերջնական սահմանողը հիմնականում ներքին իրադար-ձություններն են): Ընկեր Ստալինի այդ դրույթը Վրաստանի պատմության ամենադժվար դրվագներից մեկն արդարացված հասկանալու բանալի է տալիս: Նրա մասին, թե ինչպես պետք է հասկանանք, այսինքն՝ ինչ է նշանակում Վրաստանի քաղաքական բաժանման փաստը III–V դարերում: Սա նույն իրադարձությունն է եղել, ինչպիսին Կիևյան Ռուսաստանի տրոհումը: Այսինքն՝ այս փաստը ցուցանի՞շ է, որ Վրաստանը զարգացման հետևանքով տրոհվեց: Այդ դեպքում կստացվեր, որ Կիևյան Ռուսաստանն ավելի առաջատար երկիր է եղել, քան XV դարի Վրաստանը, և որ XIV–XV դարերը մեզ մոտ վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջան է եղել …*

Հատկանշական է. Դավթի պատմիչն առաքելական գործ է համարում իր պետության կողմից օտար երկրների գրավումը: Պատրաստ է եղել բոլոր երկրները Քրիստոսին նվիրաբերել և այդ պատճառով երկրորդ Պավլեն է ստեղծել ... Իսկ Թամարի պատմիչը հափշտակորեն վերագրում է թագավորին (այստեղ նկատի ունի Դավթին) և գովաբանում է այն իրավական թագավորին, որը չի գրավում, այլ վերածնում է պարտված ժողովրդին: Երկու իրար հակասող գաղափարախոսություն, երկու զարգացումների մասին ...

Դեմնայի ապստամբության ժամանակ Օրբելիները պարսիկներին հրավիրել են Գիորգիի դեմ:

Օրբելիների պահվածքը մոնղոլների գալու ժամանակ (անցում, բերում, մեծարում):

<…>… Перекрыть *...*

Մեր պատմության մեջ քիչ չեն տեղեկություններն այն մասին, որ թագավորը կամ ֆեոդալները սեփական պայքարի համար օտար ուժերի են դիմել (Լեոնտիից հետո) ... Սկզբունքային վեճի առարկա, ինչպես երևում է, բազմիցս է եղել: Մեզ մոտ հայտնի է օտար ուժի կիրառման մի քանի ձև ... Հերակլի տրակտատի սկզբունքը պակաս չէր հաշվի առել Դավիթ Շինարարը, ինչպես դա փաստարկված տեղեկացնում է իր պատմիչը ... Դավիթն ուսումնասիրել է ղփչաղներին, հաշվի է առել հնարավորությունները, օգուտը, որը պետք է ստանար երկիրը իրենց հրավերով և чтобы перекрыть внутреннюю слабость в борьбе с внешними и внутренними врагами. *Որոշել է նրանց բերել, սակայն այնպես է կարգավորել նրանց գործը, որ նրանք անվտանգ են եղել Վրաստանի զարգացման համար և միայն ծառայել են նրա զարգացմանը: Այս սկզբունքի վրա է կանգնած պատմաբանը. երկրի (Վրաստանի) անկախության պաշտպանությունը, պետականության հզորացումը (միացում, զարգացում): Այս սկզբունքով է շարժվել Հերակլը, Սաակաձեն (համենայն դեպս դա նկատի ունեն Թբիլելին, Արչիլը) ... Սակայն շատերն են եղել, ովքեր այս սկզբունքին չեն հետևել՝ օսմանացիներին հրավիրող կառավարությունները (Դաղիանիներ, Գուրիելներ, Աթաբեգ, /թավադները/ Ամիլախոր, Քսանի էրիսթավի, Աբաշիձե, Ռաճայի էրիսթավի) ...*

Ֆեոդալական պետություն.

Թշնամու հետ խոսում է ղեկավարը (երբ կենտրոնը ուժ չունի):

Թշնամու կողմն է անցնում ղեկավարը (երբ կենտրոնը դեռևս պայքարում է):

Թշնամուն կհետևի այս կամ այն ղեկավարը (և կպայքարի իր նմանների դեմ):

Հարություն Խուդանյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի, Կովկասի ու Անդրկովկասի երկրների պատմություն և հնագիտություն: Հեղինակ է 7 հոդվածի:
harutyunkhudanyan@gmail.com